

Մատաղն անցաւ նորադարձ Հայաստանին ալ, կամ լաւ եւս՝ անընդհատաբար յաջորդեց բնիկ հեթանոսականին: Զենոր կը համարի՝ թէ Տրդատ յետ ջնջելու կոապաշտութիւնը մեր աշխարհէն, իշխանաց հետ Յաշտիշատ եկաւ, ուր էր Լուսաւորիչ, եւ «մեծ գոհութիւն Աստուծոյ եւ պատարագս ողջակիցաց մատուցանէին... եւ աղքատաց բազում ողորմութիւնս առնէին» (48): Թէեւ այս պարագայն չկարենանք հաստատել հնագոյն աղբիւրներով, բայց սովորութիւնը բացարձակապէս հին էր, ինչպէս կը վկայեն Ե դարու յիշատակարանք: Ս. Սահակայ կանոնք Լուսաւորչին կը վերագրեն կարգեր մատաղենեաց մասին (130-1): Ուրիշ հին վկայից ալ ակնարկեցինք վերեւ (312): Եթէ Տրդատայ պատարագները «գոհութեան» համար էին, սովորականք նպատակ ունէին՝ նուիրողին ստանալ «թողութիւն մեկաց», որ բարեգործութեան բնական արգասիքն է (Մանդ. 59):

Արեւմտեայց ազգայներու մէջ մուտ գրտած գեղձմունք կամ գեղխութիւնք, որոց սկիզբը մինչեւ առաքելական դարը կ'եղնէ (Ա. կոր. ԺԱ, 20-2), պատճառեղան՝ որ նախ Պաւղոս, եւ եկեղեցւոյ Հարք Կ դարէն, կոուէին անոնց դէմ